«ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ» ԼՈՒՎԿ ՍՊԸ «Իջևան» մասնաճյուղը գրանցումից հանելու մասին

2022-08-12

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

Որոշում թիվ 1/414 Ա

12.08.2022

«ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ» ԼՈՒՎԿ ՍՊԸ-ի «Իջևան» մասնաճյուղը գրանցումից հանելու մասին

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի «է1» կետը, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 194-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» Կանոնակարգ 13-ի 50-րդ կետը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (12.08.2022թ. արձանագրություն թիվ 33) և «ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ» ԼՈՒՎԿ ՍՊԸ-ի 08.08.2022թ. միջնորդագիրը և կից փաստաթղթերը՝

Ո ր ո շ ու մ ե մ.

1. Գրանցումից հանել «ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ» ԼՈՒՎԿ ՍՊԸ-ի «Իջևան» մասնաճյուղը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի տեղակալ՝ Ներսես

Երիցյան